МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ,
НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ
УНИВЕРСИТЕТ

THE MINISTRY OF EDUCATION,
SCIENCE, CULTURE AND SPORT
REPUBLIC OF ARMENIA
YEREVAN STATE UNIVERSITY

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian st., Yerevan, 0025, Republic of Armenia
(+374 10) 55-47-52, (+374 10) 55-46-41 (Fax), info@ysu.am, www.ysu.am

ք. Երևան **23.02.2024թ.**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/83»

(գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին)

ՊԱՐԶԵՑ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կողմից 2023 թվականի օգոստոսի 25-ին տեղեկագրում (www.gnumner.am) հրապարակվել է նստարանների և ճոճանակների ձեռքբերման «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/83» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ):

Ի թիվս այլ մասնակիցների Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացվել նաև «ԱՎԳՈՄԵ ՇԻՆ» ՍՊ ընկերության կողմից (ՀՎՀՀ՝ 08428952, այսուհետ՝ Ընկերություն):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2023 թվականի սեպտեմբերի 12-ի նիստի արձանագրության 7-րդ կետով Ընկերությունը Ընթացակարգի հրավերի 2-րդ չափաբաժնի («նստատեղեր») մասով ճանաչվել է ընտրված մասնակից, 2023 թվականի հոկտեմբերի 3-ին ԵՊՀ և Ընկերության միջև կնքվել է «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/83-1» ծածկագրով և 2,481,600 (երկու միլիոն չորս հարյուր ութսունմեկ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ ընդհանուր գնով պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), իսկ 2023 թվականի հոկտեմբերի 23-ին արդեն ԵՊՀ և Ընկերության միջև՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասը և Պայմանագրի 8.15 կետը, կնքվել է ֆինանսական միջոցների նախատեսման համաձայնագիր և հաստատվել գնման առարկայի մատակարարման վերջնաժամկետը՝ այն է ֆինանսական միջոցների հատկացման համաձայնագրի կնքման օրվանից հաշված 30 օրացուցային օրվա

ընթացքում (ստացվում է մինչև 2023 թվականի նոյեմբերի 22-ը ներառյալ):

Ընկերությունը Պայմանագրով նախատեսված գնման առարկայի մատակարարումը մինչ օրս չի իրականացրել: Կնքված Պայմանագրի 2.1.1 կետի համաձայն գնորդն իրավունք ունի «ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի», իսկ 6.6 կետի համաձայն «Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով»:

Վերոնշյալ հանգամանքների լույսի ներքո՝ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.1 կետի և «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի պահանջները, ԵՊՀ-ն որոշել է պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծել:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը.

ՈՐՈՇԵՑ

Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով՝ սույն որոշումը կայացվելուն օրվան հաջորդող օրը այն տրամադրել լիազորված մարմնին և մասնակցին:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐՈՎ
ԳԾՈՎ ՊՐՈՌԵԿՏՈՐ՝ Ա. Գ. ՄԱԼԽԱՍՅԱՆ